«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ «Նախադպրոցականի կարողունակությունների ձեւավորման հիմնահարցը»

Դաստիարակ՝ Մարտիրոսյան Անի

Մանկապարտեզ՝ «Գլաձոր » ՀՈԱԿ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ 1. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀՀ-ՈՒՄ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ 5

ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ 9

2.1. Պարապմունքի պլան 9

2.2. Կրտսեր երկրորդ խմբի 3-4 տարեկանների կարողունակությունների ձևավորման գործնական աշխատանք 12

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 14

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երեխաները սուրբ են ու մաքուր։ Չի կարելի նրանց դարձնել մեր տրամադրության խաղալիքը։

Անտոն Չեխով

Երեխաների հետ լինելը բալասանն է հոգու համար։

Ֆյոդոր Դաստոևսկի

Նախադպրոցական կրթության հիմնական նպատակն է՝ ապահովել երեխայի մտավոր, սոցիալական, հուզական, ֆիզիկական և գեղագիտական ոլորտների համակողմանի ու ներդաշնակ զարգացումը։

Երեխայի զարգացումը սերտորեն կապված է նրա կարողունակությունների հետ՝ անձի այն անհատական հոգեբանական բնութագրերը, որոնք ապահովում են բարձր ձեռքբերումներ և որոշում անձի համապատասխանությունը գործունեության այս կամ այն տեսակի համար։ Կարողությունների զարգացումը որոշվում է արտաքին և ներքին պայմանների միասնությամբ՝ նրանց փոխազդեցության մեջ։ Հոգեբանները շեշտում են շրջապատող հասարակությունը մեծ ազդեցություն ունի երեխաների տաղանդների/կարողությունների զարգացման գործընթացի վրա։ Ներկայումս առավել արդիական են դարձել նախադպրոցականների կարողունակությունների ձևավորման հիմնահարցերի ուսումնասիրությունները։ Հավելենք, որ նախադպրոցականների կարողունակությունների ձևավորման հիմնահարցերին են անդրադարձել տարբեր մանկավարժներ և հոգեբաններ՝ Օ. Օ. Դրոնովան, Մ. Վ. Երմոլաևան Ա. Մակարենկոն և այլոք։ Գործողություններ կատարելով՝ երեխան զարգացնում է որոշակի կարողություններ, ուստի երեխայի գործունեության արդյունավետ կազմակերպումը թույլ կտա նրան առավել արդյունավետ կերպով դրսևորել և ամրապնդել իր կարողությունները նույնիսկ նախադպրոցական տարիքում։

Զ. Ֆրոյդը վաղ տարիքի դերը մարդու կյանքում համեմատում է ինքնաթիռի թռիչքի հետ, նշելով, որ ինչպես ինքնաթիռը հաջող վայրէջք կատարել չի կարող, եթե վերասլացքն անհաջող է, այդպես էլ երեխայի զարգացման առաջընթացը պայմանավորված է վաղ

տարիքի հաջողություններով: Կրտսեր նախադպրոցականի հոգեկանի զարգացումն ընթանում է ինքնուրույնության հաստատման ուղղությամբ: Առաջատար է խաղային գործունեությունը, որը նպաստում է աշխարհաճանաչմանը և հասակակիցների հետ հարաբերությունների ձևավորմանը: Յուրահատուկ են այս տարիքում ճգնաժամային դրսևորումները՝ մերժողականությունը (նեգատիվիզմը), կամակորությունը, եսասիրությունը, որոնք օրինաչափ են ճգնաժամի հաղթահարման ընթացքում և կարող են հանդես գալ որպես կրտսեր նախադպրոցականի զարգացման աստիճանը բնորոշող, ախտորոշիչ չափանիշներ: Դաստիարակությանը զուգահեռ դաստիարակի խնդիրն է կազմակերպել այս տարիքի նախադպրոցականների ուսուցմանը գործընթացը, ինչպես նաև կարողունակությունների ձևավորումը՝ ըստ ՀՀ Կառավարության կողմից սահմանված չափորոշիչների: Սահմանված հինգ՝ շարժողական, խոսքի և հաղորդակցման հուզական, սոցիալ-անձնային, իմացական, ինքնասպասարկման, անվտանգության, առողջ ապրելակերպի ոլորտներում, երեխաները պետք է տիրապետեն 9 կարողունակությունների՝ լեզվական և հաղորդակցական, ճանաչողական և մոտիվացիոն, ինքնաճանաչողական և սոցիալական, ժողովրդավարական և քաղաքացիական, թվային և մեդիա, մշակութային, մաթեմատիկական և տեխնիկական, տնտեսական, ֆիզիկական կրթության և առողջ ապրելակերպի:

Հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է վերհանել նախադպրոցական տարիքի երեխաների մոտ համապատասխան կարողունակությունների ձևավորման կարևորությունը: Ինչպես նաև գործնականում իրականացնել համապատասխան հետազոտություններ սաների կարողունակությունների բացահայտման և դրանց զարգացման ուղղությամբ:

Աշխատանքի կառուցվածքը: Սույն հետազոտական աշխատանքը կազմված է ներածությունից, 2 տեսական և 1 գործնական գլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀՀ-ՈՒՄ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ

Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը հանրակրթության պետական կրթական չափորոշչի բաղկացուցիչ մաս կազմող նորմատիվ իրավական ակտ է, որը սահմանում է նախադպրոցական տարիքի երեխաների (ըստ տարիքային խմբերի) զարգացման կրթական ծրագրերի բովանդակությունը, նրանց ներկայացվող վերջնարդյունքները, ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը, նախադպրոցական տարիքի երեխաների կրթության և զարգացման վերջնարդյունքի ապահովման հիմքերը: Նախադպրոցական տարիքի երեխաների կարողունակությունները ձևավորվում են ուսուցման և դաստիարակության կազմակերպման միջոցով: Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման և կրթական վերջնարդյունքները նկարագրում են, թե ինչ պիտի իմանա, կարողանա անել և հասկանա վեց տարեկան երեխան: Վերջնարդյունքներն ուղղված են կարողունակությունների ձևավորմանը[1]:

Չափորոշիչով սահմանվել են հինգ ոլորտներ, որոնցում էլ ներառված են 9 կարողունակություններ: Այդ ոլորտներն են.

- Շարժողական ոլորտ,
- խոսքի և հաղորդակցական ոլորտ,
- հուզական, սոցիալ-անձնային ոլորտ
- իմացական ոլորտ,
- ինքնասպասարկման, անվտանգության, առողջ ապրելակերպի ոլորտ,

Նախադպրոցական տարիքի ավարտին սանից ակնկալվող կարողունակություններն են՝

1. լեզվական և հաղորդակցական կարողունակություն,

[1] ՀՀ Կառավարության որոշումը «Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը հաստատելու մասին», 13 մայիսի 2021 թվականի N 744-Ն, 13.05.2021թ., 7 և 8-րդ կետեր: https://www.arlis.am/documentview.aspx?docid=152575 01.12.2023թ.

2. ճանաչողական և մոտիվացիոն կարողունակություն,
3. ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն,
4. ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն,
5. թվային և մեդիա կարողունակություն,
6. մշակութային կարողունակություն,
7. մաթեմատիկական և տեխնիկական կարողունակություն,
8. տնտեսական կարողունակություն,
9. ֆիզիկական կուլտուրայի կարողունակություն:

Քննարկենք կարողունակություններն ավելի մանրամասն:

Լեզվական և հաղորդակցական կարողունակություն: երեխան տիրապետում է գրական հայերենին, հաղորդակցվում տարբեր իրավիճակներում և միջավայրերում, դրսևորում խոսքային և ոչ խոսքային ակտիվություն՝ մասնակցություն ունենալով հասարակական կյանքին: Ընդունակ է ճանաչել բանավոր ներկայացվող երևույթները, ըմբռնել, նկարագրել, մեկնաբանել դրանք, ներկայացնել բացատրություններ: Երեխան ունակ է կողմնորոշվել լեզվական միավորներում՝ հնչյուն, բառ, նախադասություն, ունի տարրական պատկերացումներ վանկի, հնչյունի և տառի մասին, ինքնուրույն ձևակերպում է սեփական մտքերը՝ ազատ և կապակցված արտահայտելով կարծիք, վերաբերմունք որևէ երևույթի մասին: Այլ մարդկանց հետ հաղորդակցության մեջ պատկերացնում է տեղեկատվական տեխնոլոգիաների դերը և մեծահասակների օգնությամբ կիրառում դրանք:

Ճանաչողական և մոտիվացիոն կարողունակություն՝ երեխան, իր տարիքին համապատասխան, ընդունակ է պատճառահետևանքային կապեր տեսնել երևույթների, իրադարձությունների միջև, ճանաչել առարկաների և օբյեկտների կապերը, հարաբերությունները, նոր խնդիրներ լուծել: Դրսևորում է ակտիվություն, հետաքրքրասիրություն, ճանաչողական հետաքրքրություն աշխարհի, առարկաների և երևույթների, ինչպես նաև հարաբերությունների կառուցման հանդեպ: Երեխան հաճույքով (ակտիվ) ներգրավվում է գործունեության տարբեր ձևերի, մտավոր տարբեր գործողությունների, նոր բացահայտումների մեջ.

Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն։ Երեխան ճանաչում է իր արտաքին առանձնահատկությունները, ձեռք է բերում սեռադերային պատկերացումներ։ Երեխան ունի պատկերացում սեփական հնարավորությունների մասին, վստահություն սեփական ուժերի և կարողությունների հանդեպ։ Ընդունակ է ինքնակազմակերպվելու, դրսևորում է ինքնուրույնություն և ինքնասպասարկման հմտություններ։ Գործողություններում դրսևորում է նպատակաուղղվածություն և կենտրոնացվածություն։ Երեխան ճանաչում է սեփական և այլոց հույզերը, կարողանում է կառավարել սեփական հույզերը։ Ճանաչում է մեծահասակների և հասակակիցների փոխհարաբերություններում սահմանված վարքային կանոնները և դրսևորում է սոցիալապես ընդունված նորմերին համապատասխան վարք։ Շփման մեջ նախաձեռնող և կառուցողական է, դրսևորում է ընկերակցելու, համագործակցելու հմտություններ.

Ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն։ Նախադպրոցական տարիքում երեխան տիրապետում է բարեվարքության և սոցիալական արդարության պարզագույն կանոններին. դրսևորում է հարգանք և հոգատարություն շրջապատի հանդեպ, գնահատում է արարքների բարոյական ուղղվածությունը։ Ճանաչում է հայրենիքը, Հայաստանի խորհրդանիշները (դրոշ, զինանշան, օրհներգ), դրսևորում է սեր և նվիրվածություն հայրենի երկրի հանդեպ։ Ունի տարրական պատկերացումներ սեփական իրավունքների ու պարտականությունների մասին.

Թվային և մեդիա կարողունակություն՝ երեխան ունի տարրական պատկերացումներ մեդիայի վերաբերյալ, կողմնորոշվում է մեդիա բազմազանության մեջ, մեծահասակի աջակցությամբ գնահատում է ներկայացված տեղեկատվությունը, այն համադրում սեփական պատկերացումներին՝ դրսևորելով քննադատական և ընտրողական մոտեցում։ Երեխան կարողանում է օգտվել մեդիա տարրական գործիքներից՝ միևնույն ժամանակ հասկանալով դրանց կիրառման հնարավոր վտանգները և այդ հարցում սեփական պատասխանատվությունը։ Երեխան դրսևորում է առարկաների, երևույթների մոդելավորման և ստեղծագործական կարողություններ, տարբերում է իրական և վիրտուալ աշխարհները, հասկանում դրանց տարբերությունները.

Մշակութային կարողունակություն՝ երեխան կարողանում է գնահատել գեղեցիկը, ճանաչում և վերլուծում է հանրահայտ հայ և արտասահմանյան մանկագիրների գեղարվեստական ստեղծագործությունները, ճանաչում է ազգային և համաշխարհային մշակութային նմուշների ինքնատիպությունը: Դրսևորում է ընդգծված հետաքրքրություն գեղարվեստական գործունեության հանդեպ, ունակ է երաժշտության, կերպարվեստային գործունեության տարբեր տեսակների, ազգային տոների ու ավանդույթների միջոցով արտահայտելու սեփական հույզերը, զգացմունքներն ու տպավորությունները.

Մաթեմատիկական և տեխնիկական կարողունակություն՝ երեխան կարողանում է կատարել պարզ մաթեմատիկական գործողություններ, համեմատում, հետազոտում է առարկաները և երևույթները, գտնում է տարբեր խնդիրների լուծումներ, ճանաչում է թվանշանները, տիրապետում է նախաթվային և թվային հասկացություններին. երեխան կարողանում է որոշել առարկաների քանակը, համեմատել դրանք ըստ մեծության, չափի, ձևի և գույնի, տարբերակել մասը և ամբողջը, երկրաչափական պատկերներն ըստ հատկանիշների: Կարողանում է առարկաները տարբերակել նաև ըստ նյութի: Ցուցաբերում է հետաքրքրություն սարքավորումների հանդեպ, կարողանում է ծանոթ տեխնիկական հանգույցներից կառուցել նոր համադրություններ.

Տնտեսական կարողունակություն: Երեխան կարողանում է համարժեք ճանաչել և վերլուծել մեծերի աշխատանքը և դրանից ստացված արդյունքները: Գիտի տարբեր մասնագիտությունների անվանումներ և դրանց առանձնահատկությունները: Ցուցաբերում է տնտեսական պարզ հասկացությունների իմացություն, գիտի իր հետ առնչվող առարկաների ձեռքբերման եղանակները, կիրառում է տնտեսական պարզ բառապաշար: Երեխան հասկանում է շրջապատող աշխարհի և բնության երևույթների միասնականությունն ու փոխկապակցվածությունը: Ճանաչում է բնության երևույթները, գիտի բնության առանձին երևույթների վտանգների, դրանցից պաշտպանվելու մասին, անվտանգ վարքագիծ է դրսևորում բնության առանձին երևույթների՝ կայծակի, ամպրոպի, կարկուտի, անձրևի, մառախուղի ժամանակ: Ունի տարրական պատկերացումներ շրջակա միջավայրի և դրա պահպանման վերաբերյալ: Կարողանում է նկարագրել մարդու և տնտեսության ազդեցությունը բնության վրա: Հասկանում է շրջակա միջավայրի

պահպանման գործում սեփական դերը, նշանակությունը և մասնակցում է այդ գործընթացում.

Ֆիզիկական կուլտուրայի կարողունակություն։ Երեխան պատկերացում ունի ֆիզիկական վարժությունների առողջարարական նշանակության, առողջ սննդի, առողջ ապրելակերպի վարման հիմնական կանոնների՝ օրգանիզմի կոփման, օրվա ռեժիմի, հիգիենիկ կանոնների, ճիշտ կեցվածքի պահպանման մասին։ Ընկալում է ֆիզիկական վարժությունների ճիշտ կատարման ձևը, ճանաչում և տարբերում է ամառային և ձմեռային մարզաձևերը։ Ընդհանուր պատկերացում ունի շարժողական ընդունակությունների, տարածված մարզաձևերի, մարզագույքի, սպորտային հանդերձանքի մասին, ճանաչում է հայ և այլազգի անվանի մարզիկներին։ Երեխան ընդունակ է ճիշտ կատարելու մարմնամարզական, աթլետիկական վարժություններ, տարաբնույթ շարժողական գործողություններ շարժախաղերում, մարզախաղերում, շարժողական ակտիվության այլ ձևերում։ Դրսևորում է անհրաժեշտ ֆիզիկական պատրաստվածություն և պահպանում է առողջ ապրելակերպի վարման կանոնները։ Երեխան ինքնուրույն կատարում է նմանողական շարժումներ, ընդհանուր զարգացնող վարժություններ՝ առանձին, զույգերով, մարզագույքով։ Վարժությունների կատարման ընթացքում, շարժախաղերում, թիմային խաղերում դրսևորում է ինքնուրույնություն, կարգապահություն, կամք, պատասխանատվություն, համագործակցություն, վճռականություն, փոխօգնություն, ընկերասիրություն, նախաձեռնողականություն։

ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ

2.1. Պարապմունքի պլան

Կրտսեր երկրորդ խմբի 3-4 տարեկանների կարողունակությունների ձևավորման նպատակով, իմ կողմից նախապես մշակվել է պարապմունքի պլանը։ Ընտրվել է «Ինձ շրջապատող աշխարհը» ծրագրային բաղադրիչից՝ «Ընտանի կենդանիներ» թեմայի ուսուցումը։

Աղյուսակ 1. պարապմունքի պլան

Պարապմունք	Խումբ	Թեմա	Տևողություն
Ինտեգրված, էկոլոգիա և նկարչություն	Կրտսեր 3-4 տարեկաններ	«Ընտանի կենդանիներ»	2 պարապմունք
Նպատակ	Զևավորել հաղորդակցական հմտությունները: Ընտանի կենդանիների մասին գիտելիքներ փոխանցել: Դաստիարակել սեր և հոգատար վերաբերմունք կենդանիների նկատմամբ:		
Թեմային վերաբերող նյութերի հավաքում	Նյութեր- դիդակտիկ նյութերը (մատիտներ, սոսինձ, գունավոր թղթեր, դիդակտիկ պաստառներ, խաղալիք ընտանի կենդանիներ և այլն): Ուսումնասիրվել է համապատասխան գրականություն՝ թեմայի առավել արդյունավետ ուսուցման նպատակով:		
Մեթոդներ	Անհատական, զույգերով, խմբերով:		
Ընթացքը			
Խթանման փուլ	Երեխաները բաժանվում են 4 խմբի՝ յուրաքանչյուր խմբում 5 սան: Դաստիարակը գրատախտակին փակցնում է ընտանի կենդանիներից կազմված պլակատ և հարցնում, թե ով ի՞նչ ընտանի կենդանի է պահում տանը և դրսում: Դաստիարակը շրջում է խմբերում և հերթով լսում խմբերի պատասխանները:		
Իմաստի ընկալման փուլ	Այս փուլում թեմայի ամրապնդման նպատակով կազմակերպվում է խաղ՝ «Ով ինչ է ուտում»: Նպաստում է տրամաբանության, հիշողության, մտածողության, ուշադրության զարգացմանը, պատճառահետևանքային կապի ընկալմանը, խոսքի բառաքերականական կողմի, հնչյունային վանկային վերլուծություն կատարելու ունակության զարգացմանը, բառապաշարի հարստացմանը: Դաստիարակը երեխաներին բաժանում է տարբեր պատկերներ, ապա հրահանգում է գտնել ցուցադրված պատկերի տրամաբանական զույգը: Երեխաներն ընտրում և միացնում են իմաստային կապով կապված 2 պատկեր (օրինակ՝ շուն և ոսկոր):		
Ակտիվացնող խաղ	Խաղում ենք «Մուկն ու կատուն», նպատակն է սովորեցնել խաղեր, որոնց հերոսները կենդանիներ են:		

Կշռադատման փուլ	Թեմայի ամփոփում, ամբողջական ընկալման նպատակով դաստիարակի կողմից յուրաքանչյուր խմբին տրվում է հարցեր։
Հարցեր	Ի՞նչ ընտանի կենդանիներ գիտենք, Որտե՞ղ են ապրում ընտանի կենդանիները, Ի՞նչ ընտանի կենդանիներ կցանկանայիք պահել և ինչու՞, Ի՞նչ կլինի, եթե ընտանի կենդանուն բաց թողնենք վայրի բնություն, Ինչպե՞ս խնամել ընտանի կենդանիներին։

2.2. Կրտսեր երկրորդ խմբի 3-4 տարեկանների կարողունակությունների ձևավորման գործնական աշխատանք

Հետազոտական աշխատանքիս գործնական մասի համար «Գլաձոր» ՀՈԱԿ-ի կրտսեր երկրորդ խմբի 3-4 տարեկանների խմբում՝ պարապմունք եմ անցկացրել «Ընտանի կենդանիներ» թեմայով: Հետազոտությանը մասնակցել է 20 սան՝ 8 աղջիկ, 12 տղա: Նշեմ, որ 3-4 տարեկանների կրթական հիմնական ծրագրին ներկայացվում են հետևյալ պահանջները՝

- համապատասխանությունը նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչին,
- կրթության աշխարհիկ բնույթը,
- երեխաների և մեծահասակների փոխգործունեության երեխայակենտրոն մոտեցման ապահովումը,
- ազգային ավանդույթների և համամարդկային արժեքների զուգորդումը,
- նախադպրոցական կրթության բովանդակության մեջ սանի խոսքի, տրամաբանության, ֆիզիկական, մտավոր, գեղարվեստական զարգացման, իրավունքներին և պարտականություններին, էկոլոգիական նախագիտելիքներին ծանոթացման ներառումը:

Նախադպրոցական կրթության պետակական կրթական չափորոշչով սահմանված ինը կարողունակությունների ապահովման անհրաժեշտությունից ելնելով՝ կրտսեր 2-րդ խմբում սաների հետ օրվա կանոնակարգային պահերին կազմակերպվող աշխատանքն արտացոլվում է 6 ծրագրային բաղադրիչներում՝

1.Խոսքի զարգացում,

2. Ինձ շրջապատող աշխարհը,

3. Մաթեմատիկական տարրական պատկերացումներ,

4. Ֆիզկուլտուրա,

5. Երաժշտություն,

6. Կերպարվեստ և կառուցողական աշխատանք:

Սանի զարգացումը համակողմանի և լիարժեք է ընթանում, եթե բոլոր բաղադրիչներով միաժամանակ և շարունակական աշխատանք է տարվում: Կրտսեր երկրորդ խմբի 3-4 տարեկանների կրթական ծրագրում առանձնակի տեղ է հատկացված «Ինձ շրջապատող աշխարհը» ծրագրային բաղադրիչին, որի նպատակներն են՝

- Նպաստել իմացական գործընթացների, ճանաչողական հետաքրքրությունների զարգացմանը:
- Զարգացնել հաղորդակցական հմտությունները:
- Հաղորդել տարրական գիտելիքներ սեփական անձի, ընտանիքի, հայրենի երկրի, իրեն շրջապատող առարկաների, կենդանական, բուսական աշխարհի, անկենդան բնության, բնության մեջ տեղի ունեցող եղանակային փոփոխությունների մասին:
- Դաստիարակել սեր և հոգատար վերաբերմունք շրջակա միջավայրի նկատմամբ:
- Ձևավորել համապատասխան վերաբերունք շրջակա միջավայրի հանդեպ:

Հետազոտության նպատակն է՝ երեխաներին ծանոթացնել ընտանի կենդանիներին, բացատրել նրանց կապը նրանց ապրելավայրի հետ, գիտակցված և ճիշտ վերաբերմունք ունենալ կենդանական աշխարհի ներկայացուցիչների նկատմամբ, ունենալ զարգացած խոսք, հարստացնել երեխաների բառապաշարը:

Մանրամասն ներկայացնեմ պարապմունքի ընթացքը: Ուսուցումն իրականացվել է ԽԻԿ համակարգով:

Խթանման փուլ: Երեխաներին բաժանում եմ 4 խմբի՝ յուրաքանչյուր խմբում 5 սան: Նախապես իմ կողմից ընտանի կենդանիների նկարներից պատրաստված պլակատը փակցնում եմ գրատախտակին և հարցնում երեխաներին, թե ով ի՞նչ ընտանի կենդանի է պահում տանը և դրսում: Այնուհետև շրջում եմ խմբերում և հերթով լսում խմբերի պատասխանները: Երեխաների պատասխանները տարբեր էին, այս փուլում բավականին ակտիվ էին, պատասխաններին էին՝ կով, շուն, կատու, ոչխար, այծ և այլն:

Այնուհետև մի փոքր ներկայացնում եմ ընտանի կենդանիներին, պատմում թե ինչու են նրանք համարվում ընտանի, և ինչով են տարբերվում վայրի կենդանիներից:

Իմաստի ընկալման փուլ: Թեմայի ամրապնդման նպատակով կազմակերպել եմ խաղ՝ «Ով ինչ է ուտում»: Այս խաղը նպաստում է տրամաբանության, հիշողության,

մտածողության, ուշադրության զարգացմանը, պատճառահետևանքային կապի ընկալմանը, խոսքի բառաքերականական կողմի, հնչյունային վանկային վերլուծություն կատարելու ունակության զարգացմանը, բառապաշարի հարստացմանը: Յուրաքանչյուր խմբից մեկը մոտենում է սեղանին խառը դրված տարբեր պատկերներին, ապա հրահանգում եմ գտնել ցուցադրված պատկերի տրամաբանական զույգը: Երեխաներն ընտրում և միացնում են իմաստային կապով կապված 2 պատկեր (օրինակ՝ շուն և ոսկոր): Այնուհետև իրենց միացրած կենդանիներին որևէ բնորոշ հատկանիշ են ասում, օրինակ հավատարիմ շուն, գող կատու և այլն: Հաջորդիվ արտասանում ենք Ա. Խնկոյանի «Փիսիկը»:

Աշխուժացնող խաղ: Խաղում ենք «Մուկն ու կատուն», նպատակն է սովորեցնել խաղեր, որոնց հերոսները կենդանիներ են: Սաներից մեկը ընտրվում է մուկ, մյուսը՝ կատու: Սաները ձեռք ձեռքի բռնած՝ շրջան են կազմում, մուկը վազում է շրջանի շուրջը՝ կատվից փախչելով: Սաներն օգնում են մկնիկին, որպեսզի մտնի շրջանի մեջ, որ կատուն չկարողանա բռնել նրան: Երբ բռնում է, ուրիշ զույգ է դառնում մուկ ու կատու: Խաղը օգնում են նաև համագործակցել միմյանց հետ:

Կշռադատման փուլ: Թեմայի ամբողջական ընկալման նպատակով իմ կողմից յուրաքանչյուր խմբին տալիս եմ հետևյալ հարցերը:

-Ի՞նչ ընտանի կենդանիներ գիտենք,

-Որտե՞ղ են ապրում ընտանի կենդանիները,

-Ի՞նչ ընտանի կենդանիներ կցանկանայիք պահել և ինչու՞,

-Ի՞նչ կլինի, եթե ընտանի կենդանուն բաց թողնենք վայրի բնություն,

-Ինչպե՞ս խնամել ընտանի կենդանիներին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով, պետք է նշենք, որ նախադպրոցական կրթության չափորոշչի փոփոխությունը պայմանավորված է հանրակրթության պետական նոր չափորոշչի ընդունմամբ, որտեղ նախադպրոցական կրթությունը դիտարկվում է հանրակրթության նախնական աստիճան և նպատակ ունի ապահովել նախադպրոցական կրթության

համակարգից երեխայի սահուն անցումը դեպի հանրակրթություն: Իմ կողմից պահպանելով չափորոշիչով նախատեսված կետերը, իրականացրեցի «Ընտանի կենդանիները» գործնական պարապմունքը, որի ընթացքում հասանք իմ կողմից նախապես սահմանված նպատակներին: Պարապմունքը նպատակ ուներ երեխաներին ծանոթացնել ընտանի կենդանիներին, ապահովեր նրանց կապը շրջապատի հետ, գիտակից, ինչպես նաև ձևավորեր ճիշտ վերաբերմունք՝ կենդանական աշխարհի ներկայացուցիչների նկատմամբ: Այս աշխատանքի արդյունքում նախադպրոցականները հասկանում և գիտեն, որ ընտանի կենդանիները կարևոր դեր են խաղում մարդու կյանքում, ինչպես խնամել ընտանի կենդանիներին, որտեղ են նրանք ապրում, ինչ են ուտում:

Պարապմունքը լսում էր նաև տնօրենը և մեթոդիստը: Տնօրենը կարևորել է երեխաների ակտիվ մասնակցությունը, նշել, որ դաստիարակին հաջողվել է հասնել սահմանված նպատակներին: Մեթոդիստի կողմից նշվել էր, որ դաստիարակի կողմից երեխաների կարողունակությունների ձևավորման համար կարևոր նշանակություն ունեն նմանատիպ պարապմունքները, և խաղային մեթոդների կիրառումը այն դարձնում է ավելի արդյունավետ:

Եվ վերջում հավելեմ, որ, իմ կարծիքով նմանատիպ պարապմունքների արդյունավետությունն էլ ավելի է բարձրանում, երբ դաստիարակների կողմից կիրառվում են դիդակտիկ նյութերը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ Կառավարության որոշումը «Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը հաստատելու մասին», 13 մայիսի 2021 թվականի N 744-Ն, 13 .05.2021թ., 7 և 8-րդ կետեր:
2. Васильев М.А. , Программа воспитания и обучения в детском саду / под ред. М.А. Васильевой, В.В. Гербовой, Т.С. Комаровой. - 4-е изд., испр. и доп. - М.: Мо- заика-Синтез, 2007.
3. Дыбина О.Б. Занятия по ознакомлению с окружающим миром в младшей группе детского сада. - М.: Мозаика-Синтез, 2010.
4. Комарова Т.С. , В оспитание и обучение детей в средней группе детского сада / под ред. В.В. Гербовой, Т.С. Комаровой. - М.: Мозаика-Синтез, 2007.
5. Комарова Т.С. Занятия по изобразительной деятельности в младшей группе детского сада. Конспекты занятий. - М.: Мозаика-Синтез, 2007.
6. https://www.arlis.am/documentview.aspx?docid=152575